

մեր խմբագրություն, բոլոր անոնց որ տակի ձօնը, ուր ամփոփուած է նաեւ մեր խօսքով ու գրչով ուղեցին գնահատել ու թերթին 120ամեայ գործունէութեան նը- քաջալեր կանգնել մեր աշխատանքին: Կարգիւրը:

Հաճոյքով կը ներկայացնենք ստորեւ այլ պաշտօնական նամակները եւ յիշա-

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿԱՊԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Երեւան, Արուեան 29
25 Յունուարի 1963

«Բազմալեզու» հայալեռական հանգէսի խմբագրութեանը
Իտալիա, Ս. Ղազար

Յարգելի Բարեկամներ

Արտասահմանեան երկրներէ հետ բարեկամութեան եւ կուլտուրական կա- պի Հայկական Ընկերութիւնը ողջունում եւ շնորհաւորում է Ձեզ, հայկա- կան հնագոյն հայալեռական հանգէսի՝ «Բազմալեզու» հրատարակութեան 120ամեակի առթիւ:

Իր հրատարակութեան 120 տարիներէ ընթացքում՝ Ձեր հանգէսը նշա- նակալի գեր է կատարել հայալեռութեան զարգացման, ինչպէս նաեւ հա- մաշխարհային մշակոյթի լաւագոյն ստեղծագործութիւնները թարգմանու- թիւններէ միջոցով հայ ընթերցողներին ծանօթացնելու գործում:

Զարգացնելով աշխարհի տեղանաւոր հայազէտներէ լաւագոյն աւանդնե- րը, ինչպիսիք էին մեծանուն Ղ. Ալիշանը, Ն. Բիւզանդացին եւ շատ ուրիշ- ներ, Միթրաբեանները շարունակում են օգտակար եւ գնահատելի աշխա- տանք տանել հայալեռական բնագաւառում:

Կրկին շնորհաւորելով Ձեզ, թանկագին բարեկամներ, «Բազմալեզու» հրատարակութեան 120ամեակի առթիւ, ցանկանում ենք նորանոր յաջողու- թիւններ՝ հայ բազմազարեան մշակոյթի տարածման ու զարգացման գոր- ծում:

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Բ. Գրիգորեան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՕՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ – «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

Երեւան, Լեւոնեան պող. 111
19 Փետրուարի 1963

«Բազմալեզու» խմբագրութեանը

Մաշտոցի անուն Մատենադարանի տնօրէնութեան, անձնակազմի, ինչ- պէս եւ «Բանրեր Մատենադարանի» խմբագրութեան կողմից ողջոյն ենք յը- ղում Ձեզ, «Բազմալեզու» 120ամեակի առթիւ:

Հայ պարբերական մամուլի պատմութեան մէջ, եթէ փնտռենք, կան նը- րանից աւելի վաղ ծնուած, բայց չկայ նրան տարեկից ամսագիր – մօտ մէկ եւ քառորդ դար: Բայց դեռ այսօր էլ նա իր գերն ունի հայ մշակոյթի մէջ:

«Բազմալեզու» երբեք չզաւաճանեց իր անունը: Նա միշտ մնաց իս- կապէս բազմալեզու՝ բազմաբնոյթ ու բազմաձաւալ: Նրա էջերում գուցէ կա- րող եւ կարգալ թոթովող մանկան համար գրուած մի ոտանաւոր կամ խո- բնացու ինքնութիւնը քննող բանասիրական բարդ ուսումնասիրութիւն, քի- միայի մի բանաձեւ կամ Հոմերոսի պոէմը, բիւզանդական կայսրերի պատ- մութիւնը կամ զուարճալի հանելուկներ:

«Բազմալեզու» եղել է դարի մէջ իսկական զարոյց ու յուշամատեն: Բազմաթիւ հայ բանասէրներ այնտեղ են իրենց առաջին քայլերն արել եւ այնտեղ են մեքրողեան տառերով իրենց անունները ստորագրել անունի գիտականներ ու հայազէտներ: Նրա էջերում վաստակ են թողել նշանաւոր աշխարհագէտներ՝ Ալոնցը, Ինճիճեանը, Էփրեկեանը. բանաստեղծ եւ դա- սական երկերի թարգմանիչներ՝ Արսէն Բաղրատունին, Արսէն Ղազիկեանը. յողնավաստակ բանասէր ու բանաստեղծ Ղեւոնդ Ալիշանը. բանասէրներ՝ Բարսեղ Սարգիսեանը, Սուքրեանը, Պոտուրեանը, Վարդան Հացունին եւ ու- րիշ ուրիշներ:

Եւ այսօր էլ հայ վաստակած ամսագիրը կտրում է իր ուղին առանց յղկնութեան ու դադարի:

«Բազմալեզու» ծննդեան տարեկիցին մենք ջերմօրէն մաղթում ենք որ նրա տարեկիցները միայն մէկ անուն ունենան՝ ծնունդ, եւ միայն մէկ թիւ՝ ծննդեան թիւ:

ՄԱՇՏՈՅԻ ԱՆՈՒԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆ
Լ. Խաչիկեան